ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«13» Մարտի 2018 թվականի № 31-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 2-Ի «ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 23-Ի N 1060-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» № 68-Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾԻ 5-ՐԴ ԿԵՏԻ 2-ՐԴ ԵՆԹԱԿԵՏԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի «Ջրային ռեսուրսների պետական կադաստրի վարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հուլիսի 23-ի N 1060-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 68-Ն որոշման (Որոշում) հավելվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի կատարումն ապահովելու նպատակով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ին՝ Որոշման հավելվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի «գ» պարբերությամբ՝ Հայաստանի Հանրապետության տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի հանքավայրերի շահագործական պաշարների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրել ՀՀ բնապահպանության նախարարությանը՝ տարեկան պարբերականությամբ, մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը:
2. «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ին՝ Որոշման հավելվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերությամբ՝ հիդրոէլեկտրակայանների կողմից արտադրված էլեկտրաէներգիայի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրել ՀՀ

բնապահպանության նախարարությանը ամսական պարբերականությամբ, մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը:

3. «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ին՝ իր լիազորությունների շրջանակներում հասանելի՝ Որոշման հավելվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությամբ՝ Սպանդարյանի և Տոլորսի ջրամբարների ընդհանուր լցվածության առավելագույն ծավալի, ամենօրյա մուտքի և ելքի ջրածավալների և «դ» պարբերությամբ՝ Սպանդարյանի և Տոլորսի ջրամբարների հաշվառման վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը տրամադրել ՀՀ բնապահպանության նախարարությանը շաբաթական պարբերականությամբ, մինչև հաշվետու շաբաթվա վերջին աշխատանքային օրը և տարեկան պարբերականությամբ, մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը համապատասխանաբար:
4. Սույն հրամանի 2-րդ և 3-րդ կետերով տրամադրվելիք տեղեկատվությունը ներկայացնել նաև ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն:
5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

/ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ